Հայտարարություն

Մրցույթ՝ «ՀՀ Լոռու մարզի Լորուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (20 դասաժամ), տեխնոլոգիայի (տղաներ 4 դասաժամ), հասարակագիտության (7 դասաժամ), ինֆորմատիկայի (6 դասաժամ), աշխարհագրության (8 դասաժամ), քիմիայի (9 դասաժամ) և կենսաբանության (11 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1),
- մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության **հրապարակման օրվանից մինչեւ դեկտեմբերի 7-ը ներառյալ**, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **դեկտեմբերի 12-ին՝ ժամը 12:00-ին**, ՀՀ Լոռու մարզի Լորուտի միջնակարգ դպրոցում. Հասցեն՝ Լոռու մարզ, գ. Լորուտ, 2 փող., շենք 2:

Տեղեկությունների համար զանգահարել (093) 84-82-62 հեռախոսահամարով: